

բանկով գործակցիլ, ամէն մէկը հինգ հազար փրանիի բաժնէտուններ հանելով: Առջի տարիներն կամ այն է որ Հէրիոյ վաճառատունէն եկած շահը կը գործածէր ձեռնարկը ընդարձակելու, և կամ չափաւոր էին արտադրած օպսատք, բաժնէտեարց շատերը լրանելով և յաջողութեան յոյս մը չափանելով, կորստեամբ վաճառեցին ձեռուընին գրտնուած բաժիններն, որով 5000 փրանիի եւլած արժէթուղթը 2500ի ընկան: Բայց թէպէտ իրենց արուած շահուն բաժնըն դոյզն կրնար համարուիլ, միւս կողմանէ վաճառաւոցէն երած առուծախսի օպտիւ, ընկերական դրամազլիսոյն արժէքն կը մեծնար, և որ այսօր 50 միլիոնի կը հասնի: Այս նախնական միջինն մը դրամազլիսոյ գումարն է, շահաբերութիւն և քանոնինց տարուան աշխատանքի և խնայողաւթեան պատու:

1893ին գործառնութիւնը հարիւր քան

միլիոնի ելան, և արտադրած շահուն գումարն 8,360,000 փրանի: Իւրաքանչիւր տոկոսաբեր առմանակաց շահը անզամ մը միայն 19,000 փր. վեր բարձրացաւ, այսինքն երբ Շօսար բաժնուեցաւ ընկերութենէն, և ամէն մէկ թղթին 28,000 փր. բաժին ցըցուց, զրեթէ ամէն պահեստի գումարներուն հաշիւը մաքրելով ու կարգաւորելով: Այնուհետեւ Լովիր ալ հետեւեցաւ Դիլրագնի խորհական օրինակին, նախառաեսութեան արկդ մը սահմանելով, առանձինն հրոգեհի մասուց զէմ, և որ այնշափ աւելի օգտակար եղաւ՝ երբ ապահովագրական ընկերութիւնը՝ Գարենակ (Printemps) վաճառանոցաց ձախորդ արկածից հանդիպմանէն ետքը՝ եղած վասուց մէկ մասը միայն պկան հատուցանել, և այն ալ ծանր գին պահանջնելով ապահովագրողներէն: Զուտ շահը, համեմատելով վաճառմանց գումարին հետ, 6:90 կ'ըլլայ առհարիւր:

(Եարայտարելի).

## ԹԻԹԵՌՆԻԿ ԵՒ ՃԱՆՃ

Սալիսուն թեռլ թիթեռնիկ,  
Գլոր-մոլոր մանիմանի,  
Կը թըռլըտէր շատ մօտիկ  
Չորս դին վառած մի ճըրագի:  
Ու շատ հեռուն ճանճն սուուկ,  
Թթառած կաթին ի պլոտուկ,  
Ո Այ խելագար միջատ խեղճ,  
Ո Կ'ասէ, անշուշտ վերըլը վերը  
Ո Այդ բոցին մէջը ահա դա  
Ո իրեն պատիժն պիտի ըլտնայ,  
Ո Թող որ մեռնի, երբ խելք չունի,  
Ո Ես այ կաթիկն ուտեմ պիտի ։  
Եւ յիրափ, քըշիկ մ'յետոյ  
Աշխայժ սիրուն ժիր թիթեռնիկն  
Խանձուտելով ոսկի թեւիկն  
Լինի մատաղ և անգէտ զոհ

Ճենճերլով ի բոցին:  
Անընդմէջ նոյն վ յըրկենին  
Կը խոնարհի ի վայր Ճանճիկ  
Որ՝ ուտէ կաթըն անուշիկ,  
Բոլոր մարմնովն յանկարծակի  
Պլոտուկին մէջ կը դրորի:  
Կը տըզտըզաց երկայն բարակ,  
Եւ կը թողու հոն իւր սատակ:

Այս տուակին ճանին նրման,  
Ալլոց զըլիսուն գալու գործանք  
Գուշակողներ, խիստ շատեր կան.  
Մինչդեռ իրենք անայլայլակ  
Փորձութեան մէջ կ'երթան կ'ընկնան,  
Եւ կը լինին խայտառակ: